ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(տարեկան)

ՀՀ ՎԶ մարզպետն ամփոփում է 2017թ. գործունեության արդյունքները

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը 2017 թվականին ուշադրության կենտրոնում է պահել մարզի համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնց նա ծանոթացել էր համայնքային այցելությունների ընթացքում և դրանց մի մասը հնարավորության սահմանում ներառել հրատապ խնդիրների լուծման միջնաժամկետ ծախսային ծրագրերի 2017 թ.-ին իրականացվելիք աշխատանքներում: Մարզի սոցիալ-տնտեսական, առողջապահական և կրթական ոլորտներում տիրող իրավիճակը քննարկվել են մարզային ենթակայությամբ գործող կրթական և առողջապահական հաստատությունների, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ոլորտի գործունեությամբ զբաղվող առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հետ հանդիպումներում: Քննարկումների արդյունքում նախանշվել են խնդիրների լուծման հնարավորություններն ու ուղիները և քայլեր են ձեռնարկվել իրավիճակի բարելավման ուղղությամբ: Քննարկումներ են կազմակերպվել մարզի տարածքում խմելու և ոռոգելի ջրի, էլեկրաէներգիայի անխափան մատակարարման և բնապահպանական մի շարք խնդիրների շուրջ:

2017 թվականի ընթացքում մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի տարբեր համայնքների շուրջ 1718 քաղաքացիներ, որոնցից 1452-ին տրամադրվել է ֆինանսական օժանդակություն:

Մարզպետ Հ. Սարգսյանը մասնակցել է ՀՀ վարչապետի և ՀՀ ՏԿԶ նախարարի մոտ կազմակերպված ՀՀ մարզերին վերաբերող խնդիրներին նվիրված խորհրդակցություններին, որոնցից հետո քննարկված հարցերի շուրջ խորհրդակցություն է անցկացրել մարզպետարանում, ներկայացրել քննարկվող հարցերի շրջանակները, տվել համապատասխան հանձնարարականներ:
Հոկտեմբերի 20-ին Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին է ներկայացրել ՀՀ Վայոց ձորի մարզում հուլիսի 29-ին տեղի ունեցած խորհրդակցությանը ներկայացված հանձնարարականների կատարման ընթացքը:
Մարզպետը նոյեմբերի 2-ին մասնակցել է ՀՀ ԱԺ-ում <<ՀՀ 2018 թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի նախագծի քննարկումներին, իսկ նոյեմբերի 10-ին՝ տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ Երևանում մեկնարկած Տեղական ժողովրդավարությունը Հայաստանում. <<Հայացք ապագային. ապակենտրոնացման նոր օրակարգ>> խորագրով համաժողովին:

Մարզպետը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է մարզում իրականացվող հոգևոր, կրթական, մշակութային, մարզական միջոցառումներին և տոնական օրերի կապակցությամբ ուղերձներով շնորհավորել մարզի բնակիչներին:

Վայոց ձորի մարզում ս/թ մարտի 10-12-ն անց է կացվել <<Բաց դռների օր>> առողջապահական միջոցառումը: Միջոցառման ընթացքում մարզում հետազոտվել է 1154 քաղաքացի, 129-ը ուղեգրվել է Երևան, որից 38-ը վիրահատության ենթակա, 91-ը՝ կրկնահետազոտման ու կոնսուլտացիաների համար:

Մարզի համայնքներում, կրթական և մշակութային հաստատություններում մեծ շուքով է նշվել Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին նվիրված միջոցառումները, իսկ մարզային միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Խաչիկ Ասրյանը, ՀՀ ՊՆ 4-րդ կորպուսի հրամանատար, գնդապետ Վալերի Քոչարյանը:

Կազմակերպվել է ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական հաստատությունների ղեկավարների օգոստոսյան ամենամյա խորհրդակցությունը :

ՀՀ Կառավարության կողմից հայտարարված <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում մարզի բոլոր համայնքներում կատարվել են սանմաքրման, չնախատեսված տեղերում կուտակված աղբերի հեռացման աշխատանքներ, իսկ մայիսի 27-ին և հուլիսի 29-ին Վայոց ձորի մարզում կազմակերպվել են միասնական շաբաթօրյակներ:

Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ ՎԶՄ 2017-2022 թ.թ. զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև քննարկվել և, հավանության արժանանալուց հետո, ներկայացվել է մարզային ներդրումային շուրջ 32 ծրագիր:

2017թվականին կազմակերպվել է ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ՏԿԶ , ՀՀ առողջապահության, ՀՀ գյուղատնտեսության նախարարների, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ ՏԿԶ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարների, ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահի այցերը Վայոց ձորի մարզ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը մասնակցել են խոշորացված Արենի, Գլաձոր և Եղեգիս խոշորացված համայնքների ավագանիների անդրանիկ նիստերին:

Անցկացվել է Վայոց ձորի մարզխորհրդի 2017 թվականի 2 նիստերը:

Մարզպետը մշտական ուշադրության կենտրոնում է պահել մարզային ենթակայությամբ կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների աշխատանքները՝ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Համակարգել է համայնքների աշխատակազմերի, համայնքային ենթակայությամբ կրթական, մարզական և մշակութային հաստատությունների գործունեությունը:
2017 թվականին կազմակերպվել է ՀՀ ԱԺ հերթական, ինչպես նաև Արենի, Գլաձոր և Եղեգիս խոշորացված համայնքների ընտրությունները:
Համակարգվել է ՀՀ գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Արտաքին հարաբերություններ

2017 թվականի ընթացքում մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հրավերով մասնակցել է դեսպանատներում իրականացված միջոցառումներին:

Հաշվետու տարվա ՀՀ Վայոց ձորի պատվիրակությունը պաշտոնական այցով մարտի 24-ից 28-ը գտնվել է Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաքում: Պատվիրակության կազմում ընդգրկված են եղել ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավար Ռաֆֆի Խաչատրյանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանն ընդունել է ֆրանսահայ բարերար Օհան Հեքիմյանին, <<Որդեգրիր մի գյուղ>> և <<Ծագումը: Բացահայտում>> նախագծերի հեղինակ, Ավստրալիայի քաղաքացի, հայ ազգի բարեկամ Լեն Ուիքսին:

Հուլիսի 11-15-ը <<Էկորիս Նիդերլանդ Բի Վի>> ընկերության կողմից կազմակերպված ճանաչողական այցի շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանի գլխավորած պատվիրակության կազմում եղել է Նիդերլանդներում, որտեղ մասնակցել է Նիդերլանդների տարածքային զարգացման քաղաքականության պլանավորման, տարածաշրջանային մակարդակում նորարարության (էներգախնայողություն, խելացի զարգացում), տեղական կառավարման համակարգի վերաբերյալ թեմաների շուրջ քննարկումներին: Հայաստանյան պատվիրակությունը նաև եղել է Ռոտտերդամ, Հաագա, Ուտրեխտ, Վագենինգեն քաղաքներում և տեղում ծանոթացել նիդերլանդական կառավարման նորարարական պրակտիկային:
Նոյեմբեր ամսին մարզում հյուրընկալվել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովի շրջանակներում ՀՀ-ում գտնվող Վայոց ձորի մարզի համագործակից ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Արխանգելսկի մարզի նահանգապետի տեղակալ Ալեքսեյ Անդրոնովի գլխավորությամբ:

Բյուջետային հատկացումներ

2017 թվականի ընթացքում մարզին 19 ծրագրերով պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է 2776870.7 հազար դրամ, որից 1896230.0 հազար դրամը ծախսվել է կրթության ոլորտում: Մշակույթի ոլորտին հատկացվել է 21434.2 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 4170.0 հազար դրամ: Մարզի 8 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 100.9 %-ով: ՀՀ 2017 թվականի ընթացքում պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան եղել է 994805.1 հազ. Դրամ, որը Ֆինանսավորվել է 100 %-ով: ՀՀ Կառավարության որոշմամբ 2017 թվականին ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ կվտ/ժ էլեկտրաէնրգիայի քանակությունների համար 50% չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: Տարվա ընթացքում ընդամենը փոխհատուցվել է 29172.8 հազ. Դրամ բնական գազի և էլեկտրաէներգիայի գումար և հողի հարկ 3156.2 հազ. դրամ:

Կրթություն

Վայոց ձորի մարզում գործում է 48 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 31 միջնակարգ: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, 5 դպրոցներ՝ բարձր լեռնային բնակավայրերում: Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը:
Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 17 է: 50-100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 10 է: 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 21 է: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Ոստիկանության կողմից հաշվառման վերցված երեխաներ չկան:

Մարզի 48 դպրոցներում 2017-2018 ուստարում սովորում է 6368 աշակերտ, որից 685-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում: Առաջին դասարան են ընդունվել 663 երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 114 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար: Գործում են 25 նախակրթարաններ՝ 14-ը դպրոցներում: Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 151 երեխա: Մարզում գործում է 17 մանկապարտեզ 44 խմբով, որոնցում ընդգրկված է 1044 նախադպրոցական տարիքի երեխա: Նրանց հետ աշխատում են 85 դաստիարակներ: Խմբի միջին խտությունը կազմում է 23: Դաստիարակ / երեխա հարաբերակցությունը կազմում է 1:12 Մարզի պրոցներում աշխատում են 1068 ուսուցիչներ, որոնցից 971-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 90%-ը), մնացած 97-ը՝ միջնակարգ մասնագիտական: ՈՒսումնաօժանդակ անձնակազմի աշխատողների թիվը 485 է: ՈՒսուցիչ / աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:5,9: Դասարանի միջին խտությունը 12,7 - է: Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17 ժամ: Հաջողությամբ իրականցվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 րդ դասարանների 2401 երեխաներ դպրոցում ստանում են սնունդ:

Սահմանված կարգով կազմակերպվում են դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները: ՈՒստարվա ընթացքում անցկացվել է ուսուցչի թափուր տեղի համար 26 մրցույթ, իսկ լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ առաջացած տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթները: 6 դպրոցներում ընտրվել են նոր տնօրեններ:

ԴՏՀՏՇՀ-ի կողմից մարզի 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանների 1794 աշակերտների հատկացվել են ուսումնական պլանշետներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին, 2-րդ և 3-րդ դասարաններում պարապող բոլոր դասվարները:

Մարզի հանրակրթական դպրոցների մեծ մասը՝ մոտ 80%, վերանորոգված են: Բոլոր դպրոցներում լուծված է ջեռուցման խնդիրը: Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով, գործում է ինտերնետ կապը: Ներդրվել և աշխատում է Dasaran.am ծրագիրը: 2017թ. Հնդկաստանի կառավարության աջակցությամբ մարզի դպրոցներին հատկացվել է 357 համակարգիչ նրանց լրացուցիչ սարքավորումներով: Մարզի 9 դպրոցներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միության կողմից ներդրվել են ռոբոտաշինության լաբորատորիաներ: Մարզի սահմանամերձ 4 գյուղերի բոլոր դպրոցականներին դասագրքերը տրամադրվել են անվճար: Դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատ և <<Ազգային երգ ու պար>> առարկանները: Ամեն տարի փետրվար-մարտ ամիսներին անցկացվում են դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: 2016-2017 ուստարում նրանցից 52-ը մասնակցել են հանրապետական փուլին, որոնցից 11-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Դպրոցներում սահմանված կարգով անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները: Անցկացվել է հերթական ատեստավորման համար 149 ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

Անցկացվել են <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>> ,<<Տարվա լավագույն դաստիարակ>>, <<Լավագույն առարկայական ուսուցիչ>> մրցույթները:

ՀՀ կառավարության որոշմամբ մարզի սոցիալապես անապահով, բազմազավակ, զոհված զինծառայողների, աշխարհազորայինների և սակավ ապահովված ընտանիքների 195 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Մարզի դպրոցներում բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Բոլոր դպրոցներն ապահովված են ուսումնական զենքով: Կազմակերպվել և անցկացվել է <<Կորյուն>> ռազմամարզական խաղը և նախազորակոչային ու զորակոչային տարիքի երիտասարդների ռազմամարզական մրցույթը:

2017թ. ՀՀ կառավարության որոշմամբ Եղեգնաձորի և Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարանները վերակազմակերպվել են միացման ձևով միավորվելով համապատասխանաբար Եղեգնաձորի և Վայքի ավագ դպրոցների հետ:

Կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացման համար Վայոց ձորի մարզպետարանի 2018թ. գործունեության ծրագրում ընդգրկվող միջոցառումներ

1. Փոքրաթիվ աշակերտներ ունեցող դպրոցների աշակերտների ընդգրկում մոտակա բնակավայրի համեմատաբար շատ աշակերտներ ունեցող դպրոցի աշակերտական համակազմում, նրանց կրթությունը կազմակերպելով տեղի դպրոցական շենքում:
2. Դպրոցներում ժամանակակից սմարթ-դասարանների ստեղծում:
3. Հեռավար տեսադասերի անցկացում ապահովելով տեսակապ աշակերտների և դասը վարողների միջև:
4. Ուսումնական ծրագրերով հագեցված գրասալիկներով (պլանշետներով) աշակերտների ապահովում առանց ինտերնետ կապի:
5. Գրասալիկներով աշխատելու համար մեթոդական ուղեցույցի մշակում և տրամադրում ուսուցիչներին:
6. Սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի դպրոցները կադրերով ապահովելու նպատակով տեղացի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներին հնարավորություն տալ վերապատրաստման միջոցով համալրելու մանկավարժների թափուր տեղերը:

ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Միջոցառման անվանումը

1 Հայրենասիրական երգերի և ազգագրական պարերի փառատոն

2 Երգչախմբային փառատոն

3 Մայրության և գեղեցկության տոնի նշում

4 Մեծ եղեռնի 102 ամյակին նվիրված հուշ երեկո և երթ

5 Մայիսյան հաղթանակներին նվիրված մասայական միջոցառումներ (Մայիսի – 8, Մայիսի – 9 Մայիսի - 28)

6 Մայիսի-28 ին Հանրապետության տոնին նվիրված մասայական միջոցառում

7 Վարդավառի տոնին նվիրված մասայական միջոցառում

8 Երեխաների պաշպանության օրվան նվիրված միջոցառում

9 Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված միջոցառումներ սեպտեմբերի 21-ին Եղեգնաձոր, Վայք և Ջերմուկ քաղաքներում

ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Միջոցառման անվանումը

1 ՀՀ անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների 25-րդ մարզական խաղեր (Մարտ- մայիս)

2 Հանրակրթական դպրոցների Ազգային ժողովի գավաթի խաղարկություն; 1-6 դասարանցիներ (Մարտ- մայիս)

3 Զոհված ազամարտիկ Վ. Վարդանյանի հիշատակին նվիրված բռնցքամարտի հուշամրցաշար

4 Շախմատի հուշամրցաշար նվիրված Հրանտ Կարապետյանի հիշատակին

5 Դպրոցականների <<Մինի Ֆուտբոլի>> հուշամրցաշար նվիրված Լյուդվիգ Հովհաննիսյանի հիշատակին

6 ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն նախադպրոցական հիմնարկ>> մրցույթ (Մայիս- հունիս)

7 ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթ (Հունիս- հուլիս)

8 Ֆուտբոլի հուշամրցաշար Լյուդվիգ Հովհաննիսյանի հիշատակին նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25 - ամյակին

9 Մարզական փառատոն

Գյուղատնտեսություն

Մարզում գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են **192250.76**հա

-ընդամենը ոռոգվող հողեր՝ - 6534.7 հա

- ընդամենը վարելահող՝ - 15944.95հա

որից ոռոգվող՝ - 3061 հա

-բազմամյա տնկարկներ - 1857.6 հա

որից պտուղ՝ - 995.34 հա

-խաղող՝ - 862.25հա

- խոտհարք - 5058.92 հա

որից ոռոգվող 144.47 հա

- արոտ՝ - 91849.8 հա

- այլ հողատեսքեր՝ - 74697.51 հա

- տնամերձ հողեր՝ - 3141.94 հա

Մարզում առկա է 11284 գյուղացիական տնտեսություն, որոնց սեփականաշնորհվել է 15296 հա հող, որից՝ 10717 հա վարելահող, 703 հա պտուղ, 651 հա խաղող, 794 հա արոտ, 190 հա այլ հողատեսքեր, 2241 հա խոտհարք: Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շուկայականից ցածր գներով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին է հատկացվել է .

Պարարտանյութեր

Ազոտական պարարտանյութ -525.8տ, կալիումական՝ 8.8տ, ֆոսֆորական՝ 7.1տ

Մերմեր

Գարնանացան ցորեն -3.05տ, գարնանացան գարի -32.558տ, հնդկացորեն -0.02տ, սիսեռ - 0.546տ, առվույտ- 0.115տ, կորնգան -2.096տ: **Դիզելային վառելանյութ** 45 865 լ

Ներկայացվում է 2016-2017թթ ցանքերի և գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների համեմետական վերլուծությունը աղյուսակի տեսքով.

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա			Համախառն բերքը / տ /		
		2016թ	2017թ	Տարբ.	2016թ	2017թ	տարբ
1	Հացահատիկև հատիկաբնեղեն	3984	2387	-1597	12192	3327	-8865
2	Բանջարեղեն	662	535	-126	13580	11366	-2214
3	Բոստան	50	34	-16	982	738	-244
4	Կարտոֆիլ	289	223	-66	6224	4472	-1752
5	Պտուղ, հատապտուղ	2138	2514	376	4976	8100	3124
6	Խաղող	1066	1200	134	1978	4065	2087
7	Կերային	1847	1975	128	34783	27045	-9825
8	Տեխնիկական	20	17	-3	275	350	75
8	Ընդ.ցանքատարածություն	6851	5172	1680			
9	Կաթ տ.				26000		
10	Միս տ.				6400		
11	Ձու մլն. հատ				21.6		
	Համախառն արտադրանքը մլրդ. դրամ				21.8		

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար տրամադրված 117կգ ռոդիֆակում թունանյութի միջոցով մարզի 15 համայնքներում 1462.5հա վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ, տրամադրված 25.5լ <<Ցիպեր Մաքսի>> թունանյութով Ջերմուկ համայնքի 170հա վարելահողերի վրա կատարվել է մորեխների դեմ քիմիական պայքարի աշխատանքներ:

<<ՌՋԳ>> ՀԿ-ի միջոցով Մարզում ստեղծվել են 17 անասնաբուժական կետեր, 2017թ ընթացքում 980 գ կովեր ենթարկվել են արհեստական սերմնավորման, 2018թ նախատեսվում է սերմնավորել 2500գ կովեր, նպատակ ունենալով զարգացնել Շվից, Հոլշտին, Սիմենթալ ցեղատեսակները : Արոտների կայուն կառավարման բաղադրիչի շրջանակներում, մարզի թվով 15 համայնքներում կառուցվել են ջրախմոցներ, հովվի կացարաններ, բարեկարգվել են հանդամիջյան ճանապարհներ:

Արտադրվել է 8100տոննա պտուղ /+3124տ 2016թ համեմատ/:

Եղեգնաձորի պահածոների գործարանը 2017թ մթերել է 1690տ. պտուղ-բանջարեղեն /235տ պտուղ, 1455տ բանջարեղեն/, որը ավելի է 2016թ համեմատ 640 տոննայով:

Մարզի համայնքներից արտահանվել է 240 տոննա ծիրան, միջին գինը 250 դրամ, 160տ դեղձ միջին գինը 250 դրամ, 140տ խնձոր՝ միջին գինը 250 դրամ:

Արտադրված 4065տ /+2095տ 2016թ համեմատ/ խաղողից, մթերվել է 2364տ/+760տ 2016թ համեմատ/, որից մարզի 11 վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 1129.2տ /+250տ 2016թ համեմատ/:

Հինգ կաթ մթերող և վերամշակող ընկերությունները / Սալլի <<Մելիմ>>ՍՊԸ, Ելփին<<Գերասիմ>>ՍՊԸ, Աղնջաձոր ,Գնդեվազ <<ԷԿՈֆարմ>> ՍՊԸ, Եղեգնաձոր<<Գոլդեն Գոուտ>>/ մթերել են 1500տ կաթ, /+360տ 2016թ համեմատ/, ստեղծվել է 38 աշխատատեղ /+18 աշխատատեղ 2016թ համեմատ/:

Գործող յոթ չրանոցները /+2 2016թ համեմատ/ արտադրել են 70տ չիր /+30 2016թ համեմատ/, ստեղծվել է 39 աշխատատեղ /+17աշխատատեղ 2016թ համեմատ/

Գործում են 19 սառնարանային տնտեսություններ/+4 2016թ համեմատ/ 780տ հզորությամբ/+130տ 2016թ համեմատ/

Մարզի 14 համայնքներում առկա են 44 ջերմոցներ, 2,.3հա /+0.2հա 2016թ համեմատ/:

Առկա են 27 /+3 2016թ համեմատ/ կոոպերատիվներ, որոնց անդամների ընդհանուր թիվը 1167 մարդ է /+127մարդ 2016թ համեմատ/ : Կոոպերատիվներն ունեն հետևյալ ուղղվածությունը. չրի արտադրություն - 3, անասնապահություն-7, մրգի սառնարանային պահպանություն – 7, բուսաբուծություն-2, կաթի մթերում և վերամշակում - 3, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայական սպասարկում - 4: Գործում են ֆերմերային տնտեսություններ ընդ. 146, որից անասնապահություն՝ 119, հողագործություն՝ 27:

Ինտենսիվ եղանակով մշակվում է 5.7հա պտղատու այգի, 25.3 հա խաղողի այգի և 12հա հատապտուղ/ մորի, մոշ/, կաթիլային եղանակով ոռոգվում է 29.5հա, որից 4.7հա պտուղ, 24.8հա խաղող: 0.5հա խաղողի այգու վրա տեղադրվել է կարկտապաշտպան ցանց:

Անհատ ձեռներեցների կողմից կառավարություն է ներկայացվել 20 ներդրումային ծրագրեր, որոնցից 8-ը արժանացել է հավանության, երկուսը ֆինանսավորվել է:

Հոկտեմբերի 12-ին շահագործման է հանձնվել Զառիթափի սպանդանոցը, որի արտադրական հզորությունը կազմում է հերթափոխին 30 գլուխ խոշոր և 300 գլուխ մանր եղջրավոր կենդանիների սպանդ, ստեղծվել է 25 նոր աշխատատեղ, որից 10-ը մշտական: Դեկտեմբերի 31-ի դրությամբ սպանդի է ենթարկվել 1131գ մ.ե.կ, հիմնականում գառներ, որի արդյունքում ստացվել է 19300կգ միս:

Գործող երկու ձկնաբուծական տնտեսություններում արտադրվել է 13800 կգ ձուկ:

2017 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 19775 /-2487/ գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 8419 /-1237/ գլուխ, մանր եղջերավոր՝ 16808 /-4883/ գլուխ, խոզեր՝ 2490 /-137/ գլուխ , թռչուններ՝ 66706 /-49851/ թև և մեղվաընտանիք՝ 23189 /619/ փեթակ:

2018թ անասնագլխաքանակի հաշվառումը դեռ ավարտված չէ:

2017 թվականին ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 829 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 942 213 556 դրամ գյուղատնտեսական վարկեր,որից 401 գյուղացիական տնտեսությունների տրամադրվել է 412 000 000դրամ սուբսիդավորված վարկեր, 14% տոկոսադրույքով, 2 տարի մարման ժամկետով:

Պետության կողմից սուբսիդավորվել է վարկերի 6%-ը:

2010-2017թթ համայնքների կողմից ձեռք է բերվել 54 միավոր գյուղ տեխնիկա, իրենց գյուղ գործիքներով: Լիզինգային եղանակով Թառաթումբ համայնքում ձեռք է բերվել <<Բելառուս>> մակնիշի տրակտոր, իր գործիքներով:

Կարկտահարությունից վնասվել են Աղավնաձոր, Ազատեկ, Փոռ, Գոմք համայնքների այգիներն ու ցանքատարածությունները՝ ընդամենը 269.3հա: Կառավարության որպես վնասի փոխհատուցում զիջել է Գոմք, Աղավնաձոր համայնքների հողի հարկը /559 հազար դրամ/:

Ոռոգման սեզոնի ընթացքում ջուրօգտագործողներին է տրվել 10525 հազ. խմ ոռոգման ջուր , որի հասույթը կազմել է 119 199 000 դրամ, գանձվել է 121 742 000 դրամ, որը կազմում է հասույթի 102 %-ը:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ և Գետափ համայնքներում տեղադրվել են յոթ հակակարկտային կայաններ, (560հա ծածկողականությամբ), կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնեու առաջիկայում համար անհրաժեշտ են ևս 20 հակակարկտային կայաններ:

Բնապահպանություն

Տարվա ընթացքում համակարգվել է մարզի տարածքում գործող անտառտնտեսությունում տարվող աշխատաքները՝ անտառների էկոլոգիական և սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային և կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները: Մարզի տարածքում գործող անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող 13688 հա հողատարածքներից անտառածածկ է 10156 հա:

ՈՒսումնասիրվել է մարզի տարածքում ջրերի և ընդերքի օգտագործման ու պահպանության վերաբերյալ բնապահպանական օրենսդրության պահանջների կիրառման ընթացքը: ՈՒսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրեսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման՝ 3, ձկնագողության՝ 13, որսագողության 3 դեպքեր, բնությանը հասցված վնասը վերականգնված է:

Հաշվետու ժամանակաշրջանում ապօրինի ընդերք շահագործման, ինչպես նաև հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Մարզում առկա է `

- ձկնաբուծական 2 տնտեսություն
- հանքային ջրերի 11 հանքավայր
- հանքային ջրերի շշալցման 3 գործարան
- քարի արդյունահանման 8 հանքավայր
- քարի վերամշակման 6 արտադրամաս

Առողջապահություն

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 611 369.5 հազար դրամ: Մատուցվել է 57676.8 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որը նախորդ տարվա համեմատությամբ 16064.0 հազար դրամով ավելի է:
2018 թվականին վճարովի ծառայությունների գումարը նախատեսվում է հասցնել 62 968 հազ դրամի, որը 2017թ.-ի համեմատությամբ 5291.3հազար դրամով ավելի է ,ինչպես նաև 2018թ. նախատեսվում է կառուցել մարզային նոր բժշկական կենտրոն:

2017թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 30 տեղից մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 28 քաղաքացի : Իսկ 5 քաղաքացի պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի կողմից ուղեգրվել են մարզի բուժհաստատություններ:
- Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 34 մեծահասակ և 3 երեխա:
2017 թ. –ին հաշվառվել է 373 ծնունդ, 2016 թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 94-ով: Մահերի թիվը 2017թ. կազմում է 530, իսկ 2016թ.-ին՝ 493:

Սոցիալական ապահովության բնագավառ

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ: 2017 թվականի ընթացքում նպաստ է ստացել 2006 ընտանիք, որից ընտանեկան նպաստ՝ 1530 և սոցիալական նպաստ՝ 476 ընտանիք: Վճարվել է 693 մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 100 ընտանիք, վճարվել է 21.6 մլն դրամ: Ավանդների փոխհատուցում է ստացել 217 մարդ, վճարվել է 36.9 մլն. դրամ ավանդ:

Մարզում կենսաթոշակառուների թիվը 10245 է, որոնց տարվա ընթացքում վճարվել է շուրջ 4.9 մլրդ. դրամ կենսաթոշակ: Մարզի ԶՏԿ -ներում 2017թ. գրանցվել է 1147 գործազուրկ: Աշխատանքի է տեղավորվել 346 մարդ:

Ճանապարհաշինություն

2017թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել էր 333.5 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 267 կմ ճանապարհների ձմեռային պահպանության և նույն նշանակության 187.2 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ, իսկ մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել էր 86 մլն. դրամ գումար: 2017թ. ընթացքում նշված ծրագրի շրջանակներում մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա իրականացվել է 139.9 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 54.3 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ:
Զառիթափ համայնքի միջոցների հաշվին իրականացվել է Սարավանի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ՝ 0.9կմ 53.9մլն. դրամի, իսկ Զառիթափի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ՝ 19մլն. դրամի չափով:

2017թ. մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմանանորոգման, վերանորոգման, ճանապարհների ձմեռային

պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումները կազմում են ընդամենը՝ 492.4 մլն դրամ:

Քաղաքաշինություն

2018-2020 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրագրերի հետ կապված քննարկումներ ենք անցկացրել և կատարել համապատասխան ճշտումներ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ:

2015-2018 թթ. քաղաքաշինության բնագավառում քառամյա զարգացման ծրագրերի կատարման հետ կապված աշխատանքներ ենք տարել մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան վարչությունների հետ:

Աշխատանքներ ենք տարել ՀՀ պետական բյուջեով, վարկային և դրամաշնորհային ծրագրերով իրականացվող օբյեկտների ընտրության, փաստաթղթերի հավաքագրման, համայնք-կազմակերպություն համագործակցության գործում:

1. ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2017 թվականին մարզում քաղաքաշինության բնագավառում կատարվել է՝ 2 870 929,00 հազ.դրամի կառուցապատման և վերանորոգման աշխատանքներ, այդ թվում՝

Մարզպետարանի պատվիրատվությամբ՝ 320000,0 հազ.դրամ

1	Եղեգնաձոր քաղաքի մշակույթի տան 1 հարկի հիմնանորոգում և ջեռուցման համակարգի վերակառուցում	20000,0
2	Ագարակաձոր համայնքի մշակույթի տան տանիքի հիմնանորոգում	14000,0
3	Աղնջաձոր համայնքի ոռոգման ջրագծի կառուցում	15000,0
4	Արտաբույնք համայնքի «Շորեր կոչվող» տարածքում վթարային կամրջի հիմնանորոգում	7000,0
5	Գողթանիկ համայնքի մանկապարտեզի շենքի տանիքի հիմնանորոգում	12800,0
6	Ելփին համայնքի մշակույթի տան դռների և պատուհանների փոխում	10000,0
7	Ելփին համայնքի փողոցային լուսավորություն	4000,0
8	Գլաձոր համայնքի մշակույթի տան տանիքի հիմնանորոգում	20000,0
9	Եղեգիս համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին և ներքին ցանցի հիմնանորոգ.	6000,0
10	Հերմոն համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում	10000,0
11	Խաչիկ համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	15000,0
12	Հորբատեղ համայնքի մշակույթի տան հիմնանորոգում	15000,0

13	Շատին համայնքի ոռոգման ջրագծի հիմնանորոգում	10000,0
14	Շատին համայնքի խաղահրապարակի կառուցում	5000,0
15	Չիվա համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի և գլխամասային կառույցի հիմնանորոգում	15000,0
16	Սալլի համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին և արտաքին ցանցի հիմնանորոգում	10000,0
17	Աղավնաձոր համայնքի մեկ թաղամասի գազաֆիկացման ընդլայնում	10000,0
18	Վերնաշեն համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	20000,0
19	Քարագլուխ համայնքի հանդիսությունների սրահի հիմնանորոգում	10000,0
20	Զեղեա համայնքի խմելու ջրի ներքինցանցի հիմնանորոգում	8000,0
21	Թառաթումբ համայնքի ներհամայնքային ճանապարհների փլվածքի հատվածում հենապատերի կառուցում	10000,0
22	Վայքի քաղաքային այգու ցանկապատում	8000,0
23	Արփի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	15000,0
24	նոր Ազնաբերդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում	5000,0
25	Զառիթափ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում	12000,0
26	Զառիթափ համայնքում խաղահրապարակի կառուցում	5000,0
27	Խնձորուտ համայնքում խաղահրապարակի կառուցում	3000,0
28	Բարձրունի համայնքում խաղահրապարակի կառուցում	3000,0
29	Սերս համայնքում խաղահրապարակի կառուցում	2000,0
30	Վայք քաղաքում «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորություն» ծրագրի իրականացման համաֆինանսավորման տրամադրում	20200,0
31	Ջերմուկ քաղաքի բարեկարգման աշխատանքներ նախագծանախահաշվային աշխատանքներ	40 000,00
32	Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի վերանորոգում	1 900 000,00

ՀՀ պաշտպանության նախարարություն պատվիրատվությամբ՝ Վայք քաղաքում բազմաբնակարան շենքի կառուցում (ընթացքի մեջ է) -227 000.0 հազ.դրամ

Ջրային տնտեսության պետական կոմիտեի պատվիրատվությամբ՝ Շատին համայնքի բարձր ճնշման խողովակը նախկին դիրքին վերականգնման աշխատանքներ- 15 000,00 հազ.դրամ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության ՊՈԱԿ-ի միջոցներով՝ Արենի համայնքի պահեստային շինություն կառուցում- 3000,0 Հազ.դրամ

ՀՀ պետական բյուջեի միջոցներով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ՝ Ջերմուկ քաղաքի բարեկարգման աշխատանքներ (ընթացքի մեջ է) -364 929,00 **հազ. դրամ**

II. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով՝ 14871,00 հազ.դրամ- Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի ՕԿՋ-ի կառուցում, խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում

III. Համայնքային բյուջեի միջոցներով՝ 164 332,23 Հազ.դրամ, **այդ թվում՝**

1. **ք.Եղեգնաձոր**- Շահումյան-16 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում - 6 500,00

2. **Զառիթափ համայնք**

գ. Զառիթափ	բնակավայրի որոշ փողոցների հիմնանորոգում	22 191,95
գ. Զառիթափ	վարչական շենքի ընթացիկ նորոգում	3 998,70
գ. Գոմք	Խմելու ջրամատակարարման ցանցի հիմնանորոգում	1 800,00
գ.Մարտիրոս	Մեքենատրակտորային կայանի կառուցում	20.000.00
գ.Սերս	Խմոցների կառուցում	960,00
գ.Սարավան	Խմելու ջրագծի հիմնանորոգում	14 374,40
գ.Սարավան	Գյուղամիջյան ճանապարհի հիմնանորոգում	39 75,18

3. **Արենի համայնք**

9	գ. Աղավնաձոր	Գերեզմանատան ցանկապատում	16 000,00
12	գ. Խաչիկ	Ներհամայնքային փողոցների լուսավորություն	4 500,00
13	գ. Ռինդ	<<Փառքի պուրակ>> այգու բարեկարգում	10 782,00
14	գ. Ռինդ	Համայնքում կանգառների և ոռոգման ջրագծի կառուցում	7 850,00

4. **Գլաձոր համայնք**
5.

գ.Գետափ	Գերեզմանատան ճանապարհի կառուցում	12 800,00
գ.Գետափ	18 և 19-րդ փողոցների բարեկարգում	2 900,00

IV. Ռազմավարական զարգացման գործակալության միջոցներով՝ 59 871,49 հազ.դրամ, այդ թվում՝

1. Վայք համայնք
2.

գ. Արին	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	7 000,000
գ. Զեղեա	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	1 900,000
գ. Փոռ	Ջրաբիացում, բարեկարգվել է հանդամիջյան ճանապարհը	1 400,000

3. Զառիթափ համայնք

գ.Զառիթափ	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	4 597,30
գ.Բարձրունի	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	6 685,20
գ.Խնձորուտ	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	5 065,48
գ.Նոր Ազնաբերդ	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	801,555
գ.Մարտիրոս	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	5 648,65
գ.Սերս	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	4 623,307

4. Արենի համայնք

գ.Արփի	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում, անասնաբուժական կետի կառուցում	1 550,00
գ. Ելփին	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	2 600,00

5. Եղեգիս համայնք

գ.Թառաթումբ	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	4 100,00
գ.Հորբատեղ	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	6 500,00
գ.Վարդահովիտ	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	2 100,00

6. Գլաձոր համայնք

գ.Վերնաշեն	Մակատեղի, հովվի տնակի, խմոցի կառուցում	5 300,00

V. <<Վերջին օրերի սրբեր>> բարեգործական կորպորացիայի միջոցներով՝ 26 172,00 հազ.դրամ, այդ թվում՝

1. **Եղեգիս համայնք**

գ.Աղնջաձոր	Խմելու ջրագծի արտաքին ցանցի նորոգում	6 603,00
Գողթանիկ	Խմելու ջրագծի արտաքին ցանցի նորոգում	11 000,00
գ.Հորս	Խմելու ջրագծի արտաքին ցանցի նորոգում	5 550,00

2. **Արենի համայնք**

գ.Խաչիկ	Խմելու ջրագծի ներքին ցանցի նորոգում	3 019,00

Երիտասարդ կենսաբաններ հասարակական կազմակերպություն-Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի փողոցային լուսավորության կառուցում -**4500,0 հազ. դրամ**

VI. <<ՅուՔոմ>> ՍՊԸ - ի միջոցներով՝ 17 000,00 հազ.դրամ **, այդ թվում՝**

1. **Ջերմուկ համայնք**

գ.Կարմրաշեն	Բջջային կայանի կառուցում	10 000,00

2. **Զառիթափ համայնք**

գ.Զառիթափ	Բջջային կայանի կառուցում	2 000,00
գ.Սարավան	Բջջային կայանի կառուցում	5 000,00

VII. «Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի» Արմենիա հիմնադրամի միջոցներով՝ Վայք քաղաքի 10 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարելավման միջոցառումների իրականացում-**158 500,0** հազ.դրամ

VIII. Բնության համաշխարհային հիմնադրամի միջոցներով՝ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում չրանոցի կառուցում- **5000,0** Հազ.դրամ

IX. Վիվա Սել ՄՏՍ և Վայրի բնության պաշտպանության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջոցներով `Եղեգնաձոր քաղաքի Երևանյան խճուղի 1/8/ հիմնադրամի այցելուների կենտրոնի գազիֆիկացում - **500,0** Հազ.դրամ

X. Հայ կրթական հիմնարկության միջոցներով` Վայք քաղաքի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում- **36 000,0** Հազ.դրամ

XI. <<Ամքոր>>հասարակական բարեգործական կազմակերպության միջոցներով` Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցում **40 000,0** Հազ.դրամ

XII. ՀՀ ԿԱ <<ԳՏՏԶ ԾԻԳ>> ՊՀ միջոցներով՝ Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման արտաքին և ներքին ցանցի վերակառուցում -**128 800,0** Հազ.դրամ

XIII. Անհատների և անհատ ձեռներեցների միջոցներով՝ 259 495,00 Հազ.դրամ **այդ թվում՝**

Եղեգնաձոր քաղաք

Հասարակական սպասարկման կետի կառուցում	7 500,00
Սառնարանային տնտեսության կառուցում	18 895,00
Հարսանյաց պարագաների վաճառքի սրահ	10 000,00
Առևտրի սրահի կառուցում	4 500,00

Վայք քաղաք

Առևտրի սրահի կառուցում	4 000,00
Հյուրանոցի կցակառույցի կառուցում	7 000,00
Առևտրի սրահի կառուցում	4 000,00
Ավտոտնակի կառուցում	2 000,00
Առևտրի սրահի կառուցում	4 000,00
Անհատական բնակելի տուն	4 000,00
Առանձնատան պարսպի կառուցում	600,00
Ավտոտեխսպասարկման կետի կառուցում	2 000,00

Ջերմուկ քաղաք

Վարչական շենքում սառնարանային տնտեսության կառուցում	7 000,00
Բացօդյա սրճարանի կառուցում	1 500,00
Առևտրի սրահի կառուցում	4 000,00

Արենի համայնք

Լճակների օժանդակ շինությունների կառուցում	150 000,00
Բնակելի տան կառուցում	7 000,00

Գլաձոր համայնք

Բնակելի տան կառուցում	5 000,00
Անասնագոմի կառուցում	2 000,00

Եղեգիս համայնք

գ.Շատին	Ավտոտեխսպասարկման շենքի կառուցում	4 000,00
գ.Շատին	Բնակելի տան կառուցում	5 000,00
գ.Շատին	Սառնարանային տնտեսության կառուցում	3 500,00
գ.Եղեգիս	Սառնարանային տնտեսության կառուցում	2 000,00

XIV. Այլ կազմակերպություններ միջոցներով՝ 394 300,00 հազ. դրամ , **<u>այդ թվում՝</u>**

Եղեգնաձոր քաղաք

Ջրի արտադրամասի կառուցում	22 100,00
Սննդի օբյեկտի ընդլայնում	2 000,00

Արենի համայնք

Պահակատան կառուցում	5 000,00

Եղեգիս համայնք

գ.Աղնջաձոր	Անասունների խմոցի կառուցում	7 300,00
գ.Աղնջաձոր	Մեքենատրակտորային կայանի կառուցում	4 600,00

Վայք քաղաք

Արտաքին և ներքին գազիֆիկացում	3 300,00

Ջերմուկ քաղաք

Հուղարկավորության սրահի կառուցում	60 000,00
Լողավազանի կառուցում	50 000,00
<<Ջերմուկ աշխարհ>> առողջարանի վերակառուցում	235 000,00

Սպասարկման սրահի կառուցում	5 000,00

XV. ՎԶՄԲ-ի աջակցությամբ՝ «Էլեկտրահաղորդման ցանցի վերակառուցում» վարկային ծրագիր- **489 695,50** Հազ.դրամ

Ընդամենը I- XV 4 669 966,22 Հազ.դրամ

XVI. Լիդիան Արմենիա - 94 141 000,0 Հազ.դրամ
XVII. Բարձրավոլտ էլ. ցանցեր - 5 071 500,0 Հազ.դրամ

Ընդամենը մարզում – 103 882 466,22 Հազ.դրամ

Ճարտարապետության բնագավառ

2017թ-ին հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 19-ի N 12-ն և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. դեկտեմբերի 4-ի N 371-ն համատեղ հրամանը վարչական հսկողություն է իրականացվել մարզի Եղեգիս համայնքի Շատին, Հորբատեղ, Եղեգիս և Գլաձոր համայնքի Գետափ բնակվայրերում:
Աշխատանք է տարվել միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող շինությունների լիարժեք ուսումնասիրմանը և խոչնդոտ առաջացնող շինությունների վերացման ուղղությամբ:
Համաձայնություն է տրվել ՀՀ կառավարության թվով 5 որոշումների մեջ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններին և թվով 3 որոշման նախագծերին:
Նշված ժամանակահատվածում առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարությանը առընթեր քաղաքաշինական պետական կոմիտե Եղեգնաձոր, Ջերմուկ քաղաքների և Շատին համայնքում հողի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ, որոնք հաստատվել են:
Նշված ժամանակահատվածում առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարությանը առընթեր քաղաքաշինական պետական կոմիտե Եղեգնաձոր, Ջերմուկ քաղաքների գլխավոր հատակագծերում փոփոխություն կատարելու վերաբերյալ, որոնք հաստատվել են:
Բացատրական աշխատանքներ են տարվել մարզում շինթույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ և ընդունել ենք թվով 124 շինարարության և 2 քանդման թույլտվություններ համայնքներից:
Բոլոր համայնքներին պարբերաբար տեղեկացվել է քաղաքաշինության բնագավառում օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների մասին և ուսումնասիրվել է համայնքներում կայացված որոշումների (քաղաքաշինության բնագավառում) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուսումնասիրվել և պատասխանվել է համայնքներից ստացված բոլոր դիմում բողոքները և պարզաբանում է տրվել քաղաքաշինության բնագավառին վերաբերվող խնդիրներին :

Ջրամատակարարման, ջրահեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

Վայոց ձորի մարզում ազգաբնակչությունը ապահովված է շուրջօրյա խմելու ջրով :
2017թ-ի ընթացքում շարունակվել է ՀՀ կառավարությանն առընթեր «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի հետ համագործակցությունը, որի արդյունքում ավարտվել է Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրագծի արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգումը: Պետական բյուջեի միջոցներով մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել է՝ Եղեգիս, Սալլի համայնքների խմելու ջրի ջրագծի արտաքին և ներքին ցանցի , Չիվա համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի և գլխամասային կառույցի , Հերմոն համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի, Զեղեա, Արփի համայնքների խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգումը:

Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել և ընթացքի մեջ է Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի ՕԿՋ-ի կառուցման և խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքները :

<<Ամքոր>>հասարակական բարեգործական կազմակերպություն բարեգործությամբ Եղեգիս համայնքի վարդահովիտ բնակավայրում վերակառուցվել է խմելու ջրագծի ներքին և արտաքին ցանցերը :

<<Վերջին օրերի սրբեր>> բարեգործական կորպորացիայի միջոցներով մասնակի նորոգվել է Աղնջաձոր, Գողթանիկ, Խաչիկ և Հորս համայնքների խմելու ջրագծի ներքին և արտաքին ցանցերը :

<< Վեղլա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր : Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից :

2017թ. ընթացքում ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից բնակչությանը տրվող խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքները : Առաջարկվել է համայքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ջրամատակարարման համակարգերում արձանագրված թերությունները շտկելու ուղղությամբ, որի ընթացքում 2017թ. ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել :

Վայոց ձորի մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17 բնակավայրը : Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը: Գազաֆիկացման առկայությունը կնպաստի անտառների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը :

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը 2017թ-ին ավելացել է 167-ով, որից 24 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 143 անհատական տներ: Անվտանգության ապահովման համար տեղադրվել է 167 անվտանգության համակարգ: ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2017 թվականին իրականացվել է Աղավնաձոր բնակավայրի մեկ թաղամասի գազիֆիկացման ընդլայնման աշխատանքներ :

Մինչև 2017 թվականի մայիսի 27-ի շաբաթօրյակը ՀՀ Վայոց ձորի մարզում քարտեզագրվել և հատկորոշվել էր 129 աղբավայր, որից փակվել է 112-ը:

4 աղբանոցների փակման համար (Սալլի, Մալիշկա, Վերնաշեն և Քարագլուխ բնակավայրերի աղբավայրեր), որոնք ունեն փակման ենթակա աղբանոցների կարգավիճակ, ՀՀ կառավարության որոշմամբ նախագծահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով հատկացվել է 210 հազար դրամ. նախագծահետազոտական աշխատանքները ավարտվել են 2017 թվականի նոյեմբերի 8-ին՝ առկա է փորձաքննության եզրակացությունը: Աղբավայրերի փակման աշխատանքների մրցույթը տեղի կունենա 2018 թվականի առաջին եռամսյակում՝ կիրականացվեն շուրջ 7 մլն դրամի աշխատանքներ:

2017 թվականին կայացած համայնքների խոշորացման գործընթացից հետո նախատեսվում է ներկայումս շահագործվող 13 աղբավայրերից 8-ը ևս փակել և կոնսերվացնել: Մարզի Եղեգիսի (Շատին բնակավայրի տարածքում) և Արենիի (Ռինդ բնակավայրի տարածքում) խոշորացված համայնքներում նախատեսվում է ունենալ յուրաքանչյուրում մեկական աղբավայր (հարցը քննարկման փուլում է), ինչից հետո մարզում աղբավայրերի թիվը կդառնա 7-ը:

Վերոնշյալ գործընթացը նախատեսվում է ավարտել 2018 թվականի առաջին եռամսյակում:

Մարզի 8 համայնքների ղեկավարների հետ համագործակցելով հավաքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնք պարբերաբար թարմացվում են:

ՏԻ և ՀԳՄ

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :
Նախապատրաստվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ <<Մաքուր Հայաստան>> ծրագրի իրականացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզում մարզային հանձնաժողով ստեղծելու մասին որոշման նախագիծ, որը հաստատվել է 25.04.2017 թվականին մարզպետի N 37 որոշմամբ:
Համակարգվել են համապետական շաբաթօրյակների շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացված աշխատանքները և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:
Մինչև 2017 թվականի մայիսի 27-ի շաբաթօրյակը ՀՀ Վայոց ձորի մարզում քարտեզագրվել և հատկորոշվել էր 129 աղբավայր:

2017 թվականի մայիսի 27-ին և դրանից հետո փակվել է քարտեզագրված և հատկորոշված 112 աղբավայր: 4 աղբանոցների փակման համար (Սալլի, Մալիշկա, Վերնաշեն և Քարագլուխ բնակավայրերի աղբավայրեր), որոնք ունեն փակման ենթակա աղբանոցների կարգավիճակ, ՀՀ կառավարության որոշմամբ նախագծահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով հատկացվել է 210 հազար դրամ. նախագծահետազոտական աշխատանքները ավարտվել են 2017 թվականի նոյեմբերի 8-ին՝ առկա է փորձաքննության եզրակացությունը: Աղբավայրերի փակման աշխատանքների մրցույթը տեղի կունենա 2018 թվականի առաջին եռամսյակում՝ կիրականացվեն շուրջ 7 մլն դրամի աշխատանքներ: 2017 թվականին կայացած համայնքների խոշորացման գործընթացից հետո նախատեսվում է ներկայումս շահագործվող 13 աղբավայրերից 8-ը ևս փակել և կոնսերվացնել:

Մարզի Եղեգիսի (Շատին բնակավայրի տարածքում) և Արենիի (Ռինդ բնակավայրի տարածքում) խոշորացված համայնքներում նախատեսվում է ունենալ յուրաքանչյուրում մեկական աղբավայր (հարցը քննարկման փուլում է), ինչից հետո ողջ մարզում աղբավայրերի թիվը կդառնա 7-ը: Վերոնշյալ գործընթացը նախատեսվում է ավարտել 2018 թվականի առաջին եռամսյակում:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 214-Ա որոշման համաձայն համայնքներին տրամադրվել է տեղեկատվություն 2016 թվականի երկրորդ և 2017 թվականի առաջին կիսամյակներում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և հաշվառումից հանված քաղաքացիների տվյալների վերաբերյալ: Ընդունվել է միգրացիայի հետ խնդիր ունեցող 8 քաղաքացու դիմում՝ դիմումներին տրվել է ընթացք սահմանված կարգով: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից ստացվել է 9 քաղաքացու դիմումի պատասխան:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի թիվ 562-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված թիվ 2 հավելվածով ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացվել է տեղեկատվություն համապատասխան պետական մարմիններ:

Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները:
ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Համակարգվել է ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից 2016 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունների գործընթացները: Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով աշխատանքներ են տարվել համայնքային կայքերի բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ. համայնքային կայքերով լուսաբանվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված աշխատանքները: Աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ: Համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ : Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացվել են եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններ: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 12.01.2017 թվականի թիվ 5-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 24.01.2017 թվականի թիվ 5 որոշման պահանջների 2017 թվականի ընթացքում իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի, Վերնաշենի, Գետափի, Հորսի, Քարագլխի, Հորսի, Մալիշկայի, Արենի, Թառաթումբի, Եղեգիսի և Հորբատեղի համայնքներում: Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Թերությունների և բացթողումների վերաբերյալ կազմվել են ակտեր, քննարկվել և սահմանվել են ժամկետներ թերությունների վերացման ուղղությամբ: Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվել մարզպետարանի պաշտոնական կայքում:

2017 թվականի ընթացքում 4 համայնքային ծառայողներ վերապատրաստվել են, 14-ը՝ ատեստավորվել: Մարզի համայնքներում համայնքային ծառայության 39 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում համալրվել է 31 պաշտոն: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզում համայնքային ծառայության պաշտոնների թիվը 140 է:

Վարչությունը համագործակցված աշխատանքներ է տարել ԱԺ և ՏԻՄ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ. համակարգվել է 2017 թվականի ապրիլի 2-ին կայացած Ազգային Ժողովի և նոյեմբերի 5-ին մարզի 3 խոշորացված համայնքներում կայացած համայնքների ղեկավարների և ավագանու անդամների ընտրությունների գործընթացը:

2017 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի բնակիչներից ստացվել է 37 դիմում բողոք, բոլոր դիմումներին տրվել է ընթացք սահմանված կարգով:
Վարչությունը ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի բնականոն փոխգործակցությունը՝ կազմակերպվել են խորհրդակցություններ, ապահովվել է մարզխորհրդի նիստերին ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների մասնակցությունը: Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ : Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները :
2017 թվականի ընթացքում Տի և ՀԳՄ հարցերով վարչության կողմից սահմանված կարգով ընթացք է տրվել թվով 1230 հանձնարարականի:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 189457.5 հա, այդ թվում վարելահող՝ 15711.8 հա, բազմամյա տնկարքներ՝ 1710.8 հա, խոտհարքներ՝ 5060.8 հա, արոտ՝ 92309.7 հա, այլ հողատեսքեր 74664.4հա: Մարզում ոռոգվող հողերը ընդամենը կազմում են 6523.3 հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 21 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 41 առաջարկություններ, որից 29-ին միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք սահմանված կարգով փոխանցվել են համապատասխան համայնքներ, մնացած 12-ը ընթացքի մեջ են:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30 հուլիսի 1998 թվականի թիվ 479 որոշմամբ սահմանված 3-րդ կետի՝ Ռինդի, Աղնջաձորի, Աղավնաձորի, Գլաձորի և Շատինի համայնքներում կատարվել են հողամասերի գործառնական նշանակության փոփոխություններ:

ՀՀ կառավարության հունվարի 14-ի 2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ 2 հողամասերի օտարման և 7 հողամասերի կառուցապատման առաջարկություն է ներկայացվել ՀՀ ՏԿԶ նախարարություն, 1 օտարման, 6 կառուցապատմա վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն, իսկ մնացածը քննարկման փուլում են:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ Արենի, Խաչիկ, Գլաձորի,Ռինդի, Աղավնաձորի, Գողթանիկ, Արտաբույնք, Ջերմուկի / Գնդեվազ/ Վայքի /Ջեղեա/ և Զառիթափի / Սարավան / համայնքներում բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրաժեքից՝ բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 172.938 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 40.4 հա, պտղատու այգի 132.538 հա, որից 26.2հա արտացոլվել է մարզի 2017թվականի հողային հաշվեկշռում, իսկ 146.738հա կառտացոլվի 2018թ. մարզի հողային հաշվեկշռում, որի 18.5 հա խաղողի, 128.238 հա պտղատու այգիներ: Գետափի համայնքում մարզային հանձնաժողովի կողմից 2.03726հա համայնքային սեփականության պտղատու այգին փոխվել է վարելահողի / բարձրարժեքից ցածրարժեքի/:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 15 համայնքներում:

Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 489.648 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 117722.64 հազ դրամ:

Տարի	Վարձակալվող հողատարածք հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ. դրամ	Գանձվել է հազ. դրամ	Տոկոս
2017	24484.46	1441	334360.9	339571.8	101.5
2016	15303.7	1434	266984.9	263839.1	99.8

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- վարելահողերի 75 % -ը անջրդի են, հողերը բնական ցածր բերրիություն ունեն, բնակավայրերից հեռու են գտնվում:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում բաժինն իրականացրել է հետևյալ գործառույթները՝ Ուսումնասիրել է մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացրել առաջարկություններ՝ ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2017-2021թ.թ. միջոցառումների ծրագրի համար:

2017 թվականին ՏԻՄ ընտրություններից առաջ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացրել է կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումներ՝ համայնքային ընտրություններում կին թեկնածուների մասնակցության, համայնքի ղեկավարության և ավագանու կազմում կին-անդամների թվի ավելացման նպատակով: Մարզում իրականացվել են նաև կնոջ կողմից ղեկավարվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների սոցիալական և իրավական պաշտպանության և կանանց սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրեր:

Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են՝ 2017 թվականի ընթացքում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվող 5 անչափահասներից հաշվառումից հանվել է 3-ը: Անհրաժեշտության դեպքում երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով բաժինը մասնակցել է անչափահասների հարցաքննությանը: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարք դրսևորող ծնողների հետ: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ, շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված երեխաներ: Բաժինը յուրաքանչյուր եռամսյակը մեկ մասնակցում է ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում կայացող միջգրատեսչական աշխատանքային խմբի նիստին: Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում 2017 թվականին կատարվել է մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 54 երեխայի կարիքի գնահատում, նրանց վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ: 2017 թվականին մարզում հաշվառված է 123 հաշմանդամ երեխա, միակողմանի ծնողազուրկ՝ 152: Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնացված հաշվառման է վերցվել տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած 8 երեխա, որից 4-ի նկատմամբ սահմանվել է խնամակալություն, 3 երեխա տեղավորվել է Կոտայքի UOU մանկական գյուղում, 1 հաշմանդամ երեխա՝ հատուկ մասնագիտացված մանկատանը: Խնամքի հաստատությունների բեռնաթափման ծրագրի շրջանակում գիշերօթիկ հաստատությունից կենսաբանական ընտանիք է վերադարձել 2 երեխա, կասեցվել է 1 երեխայի ուղեգրումը հատուկ մասնագիտացված մանկատուն: <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի պահանջների համաձայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 148 երեխա ներառական կրթություն է ստանում մարզի հանրակրթական 9 դպրոցներում (Եղեգնաձորի № 1,2, Վայքի հիմնական, Արենիի, Զառիթափի, Շատինի միջնակարգ դպրոցներ, Ջերմուկի №1,3 հիմնական դպրոցներ, Ջերմուկի կրթահամալիր): Բաժնի կողմից բազմամասնագիտական թիմերին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական օգնություն, յուրաքանչյուր երեխայի համար լրացվել է անհատական սոցիալ-վերականգնողական ծրագիր: 2017 թվականին մարզպետարանը 44 երեխայի տրամադրել է ներառական կրթության վկայագիր: 2017 թվականին որդեգրման դիմում է ներկայացրել մարզի 3 քաղաքացի, ուսումնասիրության արդյունքում որդեգրողի թեկնածու է հաշվառվել Վայոց ձորի մարզի երկու քաղաքացի: Գործող համակարգի միջոցով նրանց տրվել է հնարավորություն՝ ծանոթանալու որդեգրման ենթակա երեխաների վերաբերյալ որոշակի անձնական տվյալների: Որդեգրման գործընթացն ուժի մեջ է:

Բաժինը սերտորեն համագործակցել է ՏԻՄ մարմինների, համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ, ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական խորհրդատվություն՝

կանոնադրական գործառույթների շրջանակում, աջակցել է ընտանեկան հակասությունների և տարաձայնությունների խնդրի լուծմանը՝ հաշվի առնելով երեխայի գերակա շահը, սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերել է նյութական և դրամական աջակցություն մարզպետարանի, մարզային և միջազգային հասարակական կազմակերպությունների, անհատ անձանց միջոցով:

Բաժինը սերտորեն համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կառույցների («Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն» ՀԿ, «ՀՕՄ»-ի Եղեգնաձորի մասնաճյուղի, <<Կանանց իրավունքների կենտրոնի Եղեգնաձորի մասնաճյուղի>>, <<Երեխաների պաշտպանության ցանց >>ՀԿ, <<Մանկական զարգացման հիմնադրամ>>, <<Վորլդ վիժն Հայաստան >>, <<Սեյվ դը չիլդրեն>>, <<Լայթ հաուս>>, <<ԱՄՔՈՐ–ՀԱՅԱՍՏԱՆ>> բարեգործական հիմնադրամ) հետ, մասնակցել նրանց կազմակերպած հանդիպումներին, աջակցել մարզում իրականացվող ծրագրերի ներդրմանն ու կլոր սեղանների անցկացմանը: Բաժնի աջակցությամբ <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի կողմից մարզի սոցիալապես անապահով ընտանիքների 53 երեխաներ օգտվել են տաք հագուստի և ձնեռային կոշիկի ծրագրից:

2017թ. ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը մասնակցել է Վայոց ձորի մարզի 10 համայնքների վարչական հսկողության աշխատանքներին, ժամանակին և սահմանված կարգով քաղաքացիներից ստացած 60 դիմումների տվել համապատասխան լուծում:

Արդյունաբերություն

2017թ. ընթացքում Վայոց ձորի մարզում, ըստ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով), թողարկվել է 15. 967 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 2%:

-Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով: Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցել է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

-Մարզում գործարարության աշխուժացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետության (ՈՒրմիա նահանգ), ՌԴ (Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետության (Մինսկի մարզ):

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզում առկա է 1400 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 29 համայնքներում: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ. անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

2016 թվականին մարզ են ժամանել շուրջ 42000 զբոսաշրջիկներ, 2017 թվականին զբոսաշրջիկների թիվն ավելացել է, հասնելով 46000-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ